ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք. Երևան «15» մայիսի 2026թ № 1382-Ա

«ԱՐՄՍԵՐՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀՀ) ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ՕԲՅԵԿՏԻ) ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 20-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը, ինչպես նաև համապատասխանության գնահատման մարմինների նշանակման համար ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության, նշանակման ոլորտի սահմանման, ինչպես նաև նշանակման կասեցման կամ չեղյալ հայտարարման համար ստեղծված աշխատանքային խմբի 2026 թվականի մայիսի 15-ի աշխատանքային հանդիպման արձանագրությունը՝

Հրամայում եմ

1. «ԱՐՄՍԵՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձարկման լաբորատորիային նշանակել սույն հրամանի հավելվածում նշված Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին՝ համաձայն հավատարմագրման վկայագրի (հավատարմագրման գրանցահամար՝ N 046/Т-140) անբաժանելի մաս հանդիսացող հավատարմագրման վկայագրի N 1, N 2 և N 3 հավելվածներում ամրագրված հավատարմագրման ոլորտի շրջանակներում ընդգրկված արտադրանքի/օբյեկտի անվանման, Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) ծածկագրի, արտադրանքի/օբյեկտի նորմատիվ իրավական ակտի և ստանդարտացման փաստաթղթի նշագրի, անվանման, ցուցանիշների անվանման, այդ թվում՝ նմուշառման, փորձարկման, այդ թվում՝ նմուշառման մեթոդը սահմանող փաստաթղթի նշագրի, անվանման, մեթոդի կետի և անվանման:

2. «ԱՐՄՍԵՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձարկման լաբորատորիային համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակել մինչև հավատարմագրման վկայագրի գործողության ժամկետի ավարտը (2029 թվականի հունվարի 14), շնորհել նշանակման վկայական և նույնականացնող համար՝ Ն-57 (H-57) 2026:

3. «ԱՐՄՍԵՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձարկման լաբորատորիային գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

4. Հանձնարարել՝ «ԱՐՄՍԵՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձարկման լաբորատորիային նշանակման ողջ ժամանակահատվածում

ապահովել գործող պատասխանատվության ապահովագրության պայմանագրի առկայությունը:

5. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

5/25/2026

X

ԱՐՄԱՆ ԽՈՋՈՅԱՆ

Signed by: KHOJOYAN ARMAN 1507870647

ԱՐՄԱՆ ԽՈՋՈՅԱՆ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ